№ 103 Յունիսի 19 (Յուլիսի 1) 1880 Յունիսի 19 (Յուլիսի 1) № 103

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Մի հաղորդութիւն։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ Բլուր գիւղից։ Նամակ խմբագրին։—Արտաքին տեսութիւն։ Անգլիական պարլամենտը։ Ֆրանսիա։ Ալբանցիների գրութեան մասին։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Պարսկաստանից։—Յայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

—

Թիֆլիսի արական (կլասիկային) գիմնազիայի դիրեկտորը պատիւ ունի յայտնել հասարակութեանը, որ ներկայ ուսումնական տարին Թիֆլիսի գիմնազիայի մէջ հաստատուելու հարցաքննութեանը ենթարկվեցան ընդամենը 28 անձ, որոնցից 27 աշակերտ գիմնազիայի VIII դասատան և մի մասնաւոր անձ (Մանվեւով)։ Սրանցից միայն մի աշակերտ չարժանացաւ հաստատուելու վկայականի և մընաց VIII դասատան մէջ միւս տարվայ համար։ Բոլոր մնացածները արժանացան հաստատուելու վկայականի։ Ահա սրանք են. 1) Ալէքսանդր Բուտիրկին, Աստրախանից, ռուս, 2) Դաւիթ Գեղեվանով, Մանգլիսից, վրացի, 3) Խաչատուր Դէյկարխանով, Երևանից, հայ, 4) Նիկոլայ Եգորով, Զալալ-Օղլից, ռուս, 5) Միքայէլ Զալիեվ, Գանձակից, հայ, 6) Պետրոս Քալանթարով, Երևանից, հայ, 7) Կոնստանտին Կամինեցկի, Բանենբուրգից ռուս, 8) Պետրոս Կովալէնսկի, Թիֆլիսից, ռուս, 9) Միքայէլ Կվալիեվ, Գորուց, վրացի, 10) Աբգար Լիսիցեվ, Սղնախից, հայ, 11) Վասիլ Լոսկով, Սլավիանսկից, ռուս, 12) Գէորգ Լոսկով, Սլավիանսկից, ռուս, 13) Ալէքսանդր Մամինով, Գորուց, հայ, 14) Ալէքսանդր Մելիկով, Պետրովսկից, վրացի, 15) Մովսէս Միրզոեվ, Թիֆլիսից, հայ, 16) Լեվ Մուրզին, Թիֆլիսից, ռուս, 17) Նիկոլայ Բաակ, Ալէքսանդրապոլից, ռուս, 18) Կարապետ Ստեփանով, Նախիջևանից, հայ, 19) Նիկիտա Տանդով, Ղզլարից, հայ, 20) Նիկոլայ Տէր-Գէորգով, Գանձակից, հայ, 21) Սոլոմոն Տէր-Ղուկասով, Թիֆլիսից, հայ, 22) Նիկոլայ Շելովսկի, Բեռանի նահանգից, ռուս, 23) Միխայլ Մըդիվանի, Թիֆլիսից, վրացի, 24) Մարտիրոս Էլիազարով, Երևանից, հայ 25) Վասիլի Իւրկովսկի, Վէյմարից, ռուս, 26) Խրիստաֆոր Խաչատուրով, Շուշուց, հայ և մասնաւոր անձն Վասիլի Մանսվետով Թիֆլիսից, վրացի։

Վերոյիշեալներից երկուսը մեդալներ ստացան. Տանդով, հայ, ոսկէ, Լոսկով, ռուս, արծաթէ։ Արքունական ստիպենդիայի կանդիդատներ վեց հոգի են ներկայացրած մանկավարժական խորհուրդից. 1) Գեղեվանով, իրաւաբանական ֆակուլտետի համար, 2) Կովալենսկի, մաթեմատիկական, 3) Կամենեցկի, 4) Տէր-Գէորգով, 5) Զալիեվ և 6) Մըդիվանի, չորսն էլ բժշկական ֆակուլտետի համար։ Բացի այդ Գէորգ Լոսկով առաջարկված է Պետերբուրգի Ֆիլոլոգիական ֆակուլտետի ստիպենդիային։ Գէորգ Լոսկովի, Կովալենսկու, Տէր-Գէորգովի և Կամենեցկու համար միջնորդվում է արքունական օգնութիւն տալ ճանապարհածախսի համար։ «Թիֆլիսի գիմնազիայի կարօտ աշակերտներին օգնող ընկերութեան» գումարից մտադրված է դրամական օգնութիւն տալ հետևեալ կերպով. 1) Վասիլի Լոսկովին 150 ր., 2) Զալիեվին 100 ր. 3) Մուրզինին 100 ր., 4) Մըդիվանուն, եթէ ստիպենդիա չը ստանայ, 200 ր։

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

Մայիսի 16

Ամսոյս 6-ին, առաւօտեան Վաղարշապատի խաժամուժ ամբոխը, փողոցներում վազվզելով, գոռում էին՝ «Փոնչին հաց չի թխում.... մենք սոված կը մեռնենք... սարաբի (պատճառ) տունը քանդուի»... և այլն։ Այս խառնիճաղանճ ամբոխի մէջ երևում էր և մեր ամենի ուշադրութիւնը իր վրա գրաւող պ. Եղիազարեանցը։ Սա էլ իր կողմից էր աղաղակում ասելով «Ախպէր, տունս քանդուեց... օրէնը 150 ռուբլի վնաս ունեմ.... ով ուզումա թող գայ, իմ փուռս էլ կը տամ իրան, ալիւրս էլ, ամեն բանս էլ.... թաք հոգիս ազատուի, մարմինս հանգստանայ... էս ինչ կրակի ու պատժի մէջ ընկայ... ֆունտը 10 կոպէկով էլ ինձ հաց ծախելը ձեռք չի տալիս»... և այլն։ «Մշակի» յարգելի ընթերցողները գուցէ կը յիշեն, որ այս պարոնը այն երևելի Եղիազարեանն է, որը Վաղարշապատի ամբողջ փուռները կապալով վերցրել է և միայն մէկ փուռն է բանեցնում, և այսպիսով հացի մենավաճառութիւնը իր ձեռքն է ձգել։ Ամեն ոք հետաքրքրվում էր իմանալ այս գոռում, գոչումների պատճառը։ Վերջապէս իմացվեցաւ որ տեղւոյս հաշտարար դատաւորը դատի է ենթարկել պ. Եղիազարեանին, նկատելով նորա քանի մի տեսակ խարդախութիւնները, այսինքն հացի չափազանց հում ու անմաքուր լինելը և կշեռքի ու քարերի անճշտութիւնը և այլն։ Դատաւորից վրէժխնդիր լինելու համար պ. Եղիազարեանը մի քանի օր հաց չը տուեց թէ Վաղարշապատի հասարակութեանը և թէ նոյն իսկ հաշտարար դատաւորին։ Բացի դրանից նա իր յաճախորդներին դրդռեց, որ խմբովին դիմեն հաշտարար դատաւորի մօտ և նրանից հաց պահանջեն, որպէս զի նա նեղն ընկած, չը շարունակի իր քննութիւնը, և ինքն էլ մի և նոյն ժամանակ հացի գինը ուզածին չափ բարձրացնի։ Բայց այս անգամ նա սխալվեցաւ, որովհետև դուրս եկան ժողովրդի միջից մի քանի անձինք, և ներկայանալով պ. գաւառապետին, յայտնեցին թէ իրանք կը տան ժողովրդին հաց, ֆունտին մի կոպէկ պակասով։ Սորա համար էլ առաջարկեցին օրինաւոր դրաւական, խոստանալով մի և նոյն ժամանակ զոյացած օգուտը դործադրել բարեդործական նպատակով։ Ժողովվեցաւ մեծ բազմութիւն և հասարակական վճիռ (мирскій приговоръ) կայացրին. այսպէսով պ. գաւառապետի կարգադրութեամբ և ամբողջ գիւղի համաձայնութեամբ հացի փուռը պ. Եղիազարեանցի փոխարէն յանձնվեցաւ յիշեալ պարոններին որ Նրանք վաճառեն ֆունտը 8½ կոպէկով։ Սոքա մի և նոյն օրը սկսեցին իրենց պատրաստութիւնը տեսնել, ծախքեր անել հիմնվելով հասարակական վճռի և պ. գաւառապետի կարգադրութեան վրա թէ՝ այլ ևս ոչինչ արգելք չէ կարող պատահել։ Բայց ինչ եղաւ։ Սորա երկրորդ օրը պ. Եղիազարեանը ուղարկում է գաւառապետի մօտ մի ուրիշ մարդ՝ պ. Գ. Մալխասեանցին, ինքն իրեն հրաժարված ձևացնելով, և պ. գաւառապետին խոստանալով, թէ ֆունտը 8 կոպէկով կը վաճառի, այն ինչ 2 օր առաջ աղաղակում էր փողոցներում, թէ 10 կոպէկով վաճառելով մեծ վնաս է կրում և այլն։ Պ. գաւառապետը, հաւատալով յիշեալ պ. Մալխասեանցի խոստմանցը յանձնեց հացի մենավաճառութիւնը նորան։ Սա Թիֆլիսից 3 ֆուրգոն ալիւր էր բերել տուել վաճառելու համար, բայց տեսաւ, որ իր ալիւրները չէ կարողանում վաճառել չափազանց վատ և դառը լինելու պատճառաւ, վերջապէս սա էլ սկսեց օգուտ աղել ողորմելի գիւղացիների դրութիւնից, միացաւ Եղիազարեանցի հետ և սորա փոխում չարունակեց հաց վաճառելը։ Բայց չուտով հանգամանքները փոխվեցան։ Եղիազարեանի երկու եղբայրները բանտարկվեցան տեղւոյս հաշտ. դատաւորի օգնական-քննիչի կարգադրութեամբ վերև յիշած յանցանքների համար. իսկ յիշեալ պ. Մալխասեանցն էլ իր երեք ֆուրգոն ալիւրները սաղացելուց յետոյ, յայտնեց թէ այլ ևս չէ կամենում հաց վաճառել—ձեռք չէ տալիս։ Այժմ ահա երկու օր է, որ հարիւրաւոր մարդիկ հաց չեն գտնում գնելու։

Այս տարվայ ցանքերի սաստիկ առատութիւնը մեծ յոյսեր է տալիս տեղական բնակիչներին. 20—25 օրից յետոյ կարելի է Արարատեան դաշտում հունձը սկսել։ Ցորենի տէրերը իրենց ամբարները բաց են արել, այն ինչ մտադրվել էին խալվարը (30 պ.) 300 ռուբլով վաճառել՝ այժմ 80 ր. էլ են աղաչում։ Գիւղացիք այժմեան փողոտէրերից իւրաքանչիւր խալվարի (30 պ.) համար 25—30 ռուբլի փող են վերցնում, որ հնձից յետոյ ցորեան տան փոդի տեղ։

Վաղարշապատի տանուտէրը, որ հրաժարեցրած էր իր գործած անթիւ զանցառութեանց ու թուլութեանց համար, այժմ տանուտէրական նշանը կրկին հետ ստացաւ և շարունակում է իր պաշտօնը։ Սորա պատիժը եղաւ միայն մի չաբաթով հրաժարվելը պաշտօնից։

***

ՆԱՄԱԿ ԲԼՈՒՐ ԳԻՒՂԻՑ

—

21 մայիսի

Անցեալ տարուան արմտեաց թերի գալուն համեմատ այս տարի անցեալ տարուան պակասը լցնելու չափ առատութեամբ հունձք կը խոստանայր ողջոյն Արարատեան դաշտի ցանքը, ոչ պակաս երևոյթ ցոյց տալով և լեռնային տեղեաց բուսաբերութիւնքը։

Բայց կարծես թէ երկինքն խանդալով երկրի այս կանաչազարդ բարեբախտութեանը, կամեցաւ հարուածել նորա հպարտութեան կարծիքը, չփոթութեան մէջ ձգելով իր և իր ընակչաց մտքերն իրենց այս երջանիկ նպատակին հասնելու քայլափոխութեան մէջ, և թէ ինչ կերպով, ահաւասիկ եղելութեան համառօտ պատմութիւնը։

Մայիս ամսոյ իսկ երրորդ օրն, ժամը 2 ին (աւլա Ֆրանկայ) Մասիսի կողէն սևագոյն ամպ մի ելաւ հակառակ դիրք բռնելով դէպի արևմուտք, յառաջ խաղալով յուժգին որոտմունքով և սաստկ փայլատակելով, և երբ 2—3 ժամու չափ տեղ նոյն ուղղութեամբ առաջ գնաց Հաբեղեանց լեռնագագաթ կողը քերելով, յանկարծուստ հարաւային կողմէն փոթորիկ մի ելաւ և ամպերի երասանակը դէպի հիւսիս դարձուց Սահաթ գաւառի դաշտավայրեաց վրա, տեղալով նմանը չը տեսնուած յորդութեամբ անձրև և կարկուտ դեռ նոր ի նորոյ հասկերը պոկեալ ցանքերու վրա, այնպիսի սաստկութեամբ, որ դաշտի վրա գտնուած մարդ, անասուն մոլորեցան իրանց ճանապարհէն, դէպի գեղերը փախչելու։

Փոթորիկը փարատուելէն զկնի դիտուեցաւ, տեսնուաւ որ փոթորիկը անցած տեղերը ցանքի նշմար չէ մնացած. ամպրոպի հարուածած տեղի երկայնութիւնն 4 ժամու չափ տեղ, և լայնութիւնն մէկ ժամու, ամենէն բերրի և արգաւանդ արտորէից վրայէն անցանելով, կարկուտը իւր մեծութեան սովորականէն դուրս կաղինի և ընկուզի մեծութեամբ դիզուած տեսնուաւ գետնի վրա։ Քամու սաստկութիւն նմանապէս անօրինակ, այնպէս որ կարկտէն հարուածեալ ցորենաբոյսերը անարևոյթ եղած էին, յայն աստիճան որ տեսնողին երևում էր, թէ այստեղ բնաւ ցորեն չէ ցանուած, ծառերի ոստերը օդի մէջէն տեղէ ի տեղ էին քշվում, միահամուռ ցորենն, գարի, հաճար, առաւոյտ, խաղող և ծառապտուղ բոլորը փոթորկի բռնութեան զոհ դնացին, և այս անակնկալ դիպուածին ենթակայ եղան մօտիկ տասնի չափ գեղեր, վեցը հայաբնակ, և չորսը թուրքաբնակ. վերոյիշեալ գիւղերի յանդոց մէկ չորրորդը իսպառ վնասվեցաւ, և մէկ չորրորդն էլ ըստ մասնեայ կերպիւ։

Այս փոթորիկը մէկ զարմանալի հետևանք թողած է, որուն խելք հասցնելը բնագիտաց կը վերաբերի. փոթորիկը անցած տեղէն մղոններով հեռու, ուր բնաւ կարկուտ չէ դեկած բացի անձրևէն, ցորենի արտերի մէջ գտնուած տարեկանը, չավտառը, որ արդէն չափն առած և ծաղիկ է, առանց կարկուտ դիպչելու և կոտրվելու՝ չորացել են, և հատուփուտ էլ ցորենի հասկեր, որուն ռամիկները երկնային ցասման մէկ պատիժ են համարում. բայց ըստ մեզ ուրիշ բան չէ, եթէ ոչ եկիպտականացեալ ամպերի մէկ հետևանքը, որ կայծակելով արծարծվեր և այդ բուսերին աղդեր է, ըստ որում վնասեալ հասկերէն ճիշտ այն հոտն է բուրում, ինչ որ կայծակը զտրկած նիւթերէն, այսինքն վառօդի հոտի նման մէկ անախորժ հոտ։

Այս երկնատեղ հարուածով բազմաթիւ հողագործ գերդաստաններ ձեռնթափ մնելով առաջիկայ կալի և հնձոց ակնկալութենէն, ձեռն ի ծոցի յուսակտուր լքան մնացին, ի վերջոյ ուրիշ միջոց մտածել չը կարողանալով, դիմեցին տեղական տեսչութեան և յայտարարութիւն տուին, յորմէ այս յուսադրական պատասխանին ընկալան յարքունուստ կորեակ բերել տալով հարուածեալ ցորենների տեղերը սերմանելով, առաջիկայ տարուան պարէն յուսալ։

Փոթորկի այս նիւթական վնասէն աւելի բարոյական վնաս առաջ եկաւ այն կարգի հասարակութեան, որը հաց գնելու պարտաւորուած էին, մանաւանդ Վաղարշակերտու գաղթականներին և թափառական մարդկանց։ Քանի որ ցանքերի այս յաջող երևոյթով սկսել էր սովի խստութիւն մեղմանալ, ցորենի խալվարն 150 ռուբլ, 100 կամ 90 ռուբլ իջնալ, այս ձախողակ դէպքով կրկին ահի և դողի մէջ ընկան բոլորն էլ, խոթալով մի գուցէ վերակրկնուի աւերիչ փոթորիկը։ Այսպէս միապէս վնաս պատճառեց այս անօրինակ դէպքն ունեցողներին և միանգամայն չունեցողներին։

Արարատեան դաշտը չրջապատող լերանց գագաթունքը դաշտէն հեռու գտնուելով, կարկտաբեր ամպեր քիչ անգամ կը հասնեն դաշտի վրա, այս է պատճառն որ խիստ տարօրինակ կը թուի այս կարկտի հոսմունքը։ Այս դաշտը երաշտութեան չի վախնար չնորհիւ Երասխի անուանելի հոսանքին, ուստից անթիւ առուներով յաջ և յահեակ կուռոգուի ողջոյն դաշտը, մարախն էլ, որչափ կը միջուի, միանգամ հիւրած է Արարատին Գանձակի վերայով գալով 1847 թուականին. սորա համար է որ Արարատեան աշխարհը միշտ նեցուկ հանդիսացած է ուրիշ հեռաւոր նահանգաց, և այս անգամ ևս ամեն կողմերէ թափած են ոչ միայն Արարատի ընիկ որդիք, այլ քուրդ, ասորի ևս խումբ խումբ գաղթում են Երևան, և գրեթէ բոլորն էլ ապրում են մուրալով քան թէ ուրիշ միջոցաւ։ Այսու չընչաչարիկ յատկութեամբ վճռում է Արարատեան տչխարհն ժայր լինել բոլոր Հայաստանին ի հարկաւոր դէպս սնունդ տալով իր մօտաւոր և հեռաւոր որդոց, ինչպէս բարոյապէս նոյն և նիւթապէս։

Գէորգ քահանայ Յովհաննէսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 16 մայիսի

Ձեր պատուական լրագրի էջերէն տեղեկանալով Վասպուրական երկրի մեր արիւնակից հայ եղբարց սովի պատճառաւ կրած վիշտք և տառապանք, և մինչև իսկ անօթի մեռնելը, մեր հայ անունը

համարձակեցուց զմեզ հանգանակել մեր ծանօթներէն ի նպաստ սովատանջ եղբարց մերոց։ Բայց որովհետև երբեմն կարդացած էինք քաղաքիս լրագրաց միոյն մէջ կօշկակար արհեստաւորին իբր տգէտ լինելն, որոյ համար պահ մը թէև երկմտեցանք զի մի գուցէ մեզ այս տեսակ ծառայութեան անարժան համարելով զլանան ու չը վճարեն։ Պատահեցանք նաև այնպիսի անձանց, որոնք ուսեալ եղբայրասէր և ողորմած կը ձևանան միայն խօսքով, իսկ գործնականապէս բոլորովին հեռու լինելով, կը պատասխանեն (մթէ եղբայրսիրութիւնը փողով կը լինի) և անվճար մեզ կը հեռացնեն։ Այսուամենայնիւ մենք չը յուսահատելով այս տեսակ գրուածոց, և մարդկանց պատասխանին՝ ջանացինք հաւաքել նամակիս ներփակեալ 91 ր. ինսուն և մէկ բուբլի. ուստի խոնարհաբար խնդրեմք բարեհաճէք հասցնել զայն ուր որ հարկն է, չը զլանալով նա և անկիւն մի չնորհել ձեր պատուական թերթի էջերուն միոյն մէջ յիշեալ նուիրատուաց անունները իրենց նուէրներովն։

Սիմէօն Տէր-Յակովբեանց 10 ր., Պետրոս Մեղաւորեան 2 ր., Կարապետ Գաբրիէլեան 1 ր., Ալէքսի Վախանեան (վրացի) 2 ր., Գէորգ Զուխաճեան 1 ր., Դաւիթ Խառազեանց 3 ր., Սահակ Մելիքեանց 1 ր., Ա. Ակոբով 1 ր., Սարգիս Վարդանեանց 1 ր., Նիկոլայ Բաղդասարեանց 1 ր., Տիգրան Անուշեանց 1 ր., Պատուական Մելիքեանց 1 ր., Վանանդ 2 ր., Աղապապ Երեմեանց 1 ր., Հայ ոմն 5 ր., Ազիզ Տեմիրեան 1 ր., Գրիգոր Սարաճեան 4 ր., Յովհաննէս Էմինով 5 ր., Հայ ոմն 3 ր., Հայ ոմն 3 ր., Հայ ոմն 2 ր., Հայ ոմն 2 ր., Վառվառեա Յարութիւնեան 1 ր., Տէր Յովհաննէսով 3 ր., Հայ ոմն 1 ր., Ալէքսանդր Միլեանց 1 ր., Հաճի Գէորգ Հաճի Յակոբեան 2 ր., Մի ոմն 1 ր., Հայ ոմն 1 ր., Հայ ոմն 1 ր., Ժորժ Լուքչէք Քարատաղը 50 կ., Բաղդան Լիսինով 3 ր., Յարութիւնեանց 1 ր., Յովհաննէս Մուրադեանց 1 ր., Սիմէօն Օգմեվ 1 ր., Պետրոս Աստուրեան (կօշկակար) 10 ր., Առաքել Քալէնտէրեան (կօշկակար) 10 ր., Հայ ոմն 50 կ.։ Գումարն է 91 ր.։

Կօշկակար Պետրոս Աստուրեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Անգլիերէն «Daily News» լրագրի յունիսի 12-դ թուի համարից թարգմանեցինք մանրամասնօրէն պարլամենտում Հայաստանի համար եղած վիճաբանութիւնը։

Լորդ Կարնարվոն հարցնելով, թէ արդեօք կարո՞ղ է Թագուհու կառավարութիւնը տեղեկութիւն տալ, թէ ինչ քայլեր են արված Թիւրքաց կառավարութեան կողմանէ Հայաստանում կարգ ու կանոն վերականգնելու և Թշուառութեանը վերջ տալու համար, ասաց թէ «ես բնաւ և երբէք չեմ ուզում կառավարութեան համար դժուարութիւններ յարուցանել, այլ մենք Հայաստանի վերաբերութեամբ մի քանի պարտաւորութիւններ ենք յանձն առել, և ես վստահ եմ որ կառավարութեան երկու մասներն էլ հաւասարապէս փափաքում են կատարել նրանց և մեղմացնել այն չարչարանքները, որոնց ենթարկված են հայերը։ Վերջին պարլամենտական նիստերի շրջանը փակելուց յետոյ երկու կապոյտ գրքեր հրատարակվեցան, որոնք աղետալի տեղեկութիւններ են տալիս նրանց տանջանքների մասին պատերազմի վերջանալուց յետոյ։ Նշանակվեցաւ յանձնաժողով յանձնաժողովի ետևից Հայաստանի ժողովրդի վիճակը քննելու։ Դրանք ժանտախտի հանդիպեցին. և մինչդեռ քրիստոնեայք ամենասոսկալի վիճակի մէջ են, մահմեդականներն էլ ճնշված են վճարներով։ Մի փոքր գաւառի մէջ 144 գիւղեր են ջնջված և բնակիչները ոչնչացել են Թշուառութիւնից։ Ասվում է, որ վերջին տարվայ ընթացքում ոչ սակաւ քան Թէ 2000 ընտանիք գաղթել են Ռուսաստան, և դրանցից աւելի շատ պաշտպանութիւն են սպասում այդ կողմից։ Թիւրքաց կենտրոնական կառավարութիւնը այս վայրկեանում անկարող էր մի դարման մատուցանել, և երևում է բոլորովին շշկլված և անձարակ։ Նրանք փող չունեն, զօրքերը բնաւ ռոճիկ չեն ստանում, դէպքեր էլ պատահում են, որ ուտելիք չեն ունենում, և մի տեղ էլ եղել է որ իրանց պղնձեղէնը ծախել են կերակուր ձարելու համար։ Վերջի զատկին կառավարութեան ջաղացները դատարկ էին, մինչդեռ պալատի ամսական պարէնը առատ առատ տրվում էր։ Ժողովրդի վիճակը ամենայետին աստիճանի ողորմելի և յուսահատական է, բայց միանգամայն հաւատի եմ որ պէտք է նայել այդ երկրի վրա կարեկցութեամբ և յուսալով։ Իսկ ինչ որ վերաբերվում է երկրին, պէտք է ասել, որ ընդարձակ և արգասաւոր գաւառներ չոր անապատներ են դարձած։ Ես վախենում եմ թէ նախագահ ըրլը ինձ անբաւարար պատասխան պէտք է տայ։ Իսկ գալով կատարվելի բարեկարգութիւններին, պէտք է ասել, որ մեծ վստահութեան կարօտութիւն կար և բայի դմանէ մեծ պակասութիւն կար փողի այն բարենորոգութիւնքը իրագործելու։ Բայց եթէ կարելի լինէր իրագործել, ես հաւատացած եմ որ մի մեծ փոփոխանք (katastrophe) մէջ տեղից կը վերանայ։ Միայն երկու նորոգութիւնք կան, որ անհրաժեշտ հարկաւոր էին. նախ՝ որ մի քրիստոնեայ կուսակալ նշանակէին քրիստոնեայ ժողովրդին հովանաւորելու, երկրորդ՝ որ նրան լիազօր իշխանութիւն տրուէր բարեկարգութիւնները իրագործելու։ Ես հաւատացած եմ, որ քրիստոնեայ կուսակալի հետ միասին փողն էլ կը զար հէնց հայերից իրանցից, և ես օրինակ եմ բերում Լիբանանի գաւառը, ուր ոչ մի դիմադրութեան ցոյց չեղաւ մահմեդական ժողովրդի կողմանէ քրիստոնեայ կուսակալի կառավարութեան տակը մտնելու։ Այս հանգամանքներում շահաւէտ կը լինէր իմանալ թէ ի՞նչ քայլեր է արել Թիւրքաց կառավարութիւնը ժողովրդի ներկայ վիճակը բարւոքելու համար։

Ըրլ Դրէնվիլ ասաց. վախենում եմ թէ պիտի չը կարողանամ մի բաւարար պատասխան տալ ազնիւ ըրլի հարցմանը. բայց միանգամայն և ձիշդ չէ ասել թէ կառավարութիւնը ոչ մի քայլ չէ առած Փոքր-Ասիոյ տխուր վիճակի նկատմամբ։ Ազնիւ ըրլը չափազանցութիւն չէ արել, այն Թշուառութեանց վրա խօսելով.... որ առաջ են եկած զանազան պատճառներից։ Առաջին պատճառը պատերազմն էր. երկրորդը վերջին վատ հունձքերը և. երկրի անկանոն վիճակը. մի ուրիշ պատճառ այն նորանոր բազմաթիւ փողի պահանջներն են, որոնք պէտք են կառավարութեան, և սա ինքն էլ յառաջ է եկած բուն վարչութեան իրան վատ եղանակից։ Երկրի ապագայ վիճակը արդարև շատ մառախլապատ էր, և. ցորենը կառավարութիւնը մի այնպիսի ձևով բաժանեց, որ երկիրը մի օգուտ չը տեսաւ. և եթէ մեր հիւպատոսարաններից ցորեն չը բաժանվէր, սոսկ իբրև ողորմութիւն, անհամար մեռնողներ պէտք է եղած լինէին։ Ուրիշ մի որ և է յոյս չը կայ գաւառներում մի տևողական բարւոքում մտցնելու, բացի այն, որ փոխվի այժմ եղած վարչութիւնը։ Ազնիւ ըրլը հարցրեց թէ Թիւրքաց կառավարութիւնը ի՞նչ քայլեր է առնում Հայաստանի Թշուառութիւնը ամոքելու։ Թիւրքաց կառավարութիւնը յօժարութիւն ցոյց տուեց յանձնաժողով կազմել, և իրաւերկու յանձնաժողովներ էլ կազմվեցան վերջին երկու տարվայ միջոցում, բայց նրանց տեղեկագրերը մեր Թագուհու կառավարութեան չեն հասել, և իրան ոչինչ յայտնի չէ, ասաց ըրլ Դրենվիլը, թէ Թիւրքաց կենտրոնական կառավարութիւնը այն յանձնաժողովների յանձնարարութեանցն ու առաջարկութեանցը մի ամենաչնչին գործնական ուշադրութիւն արած լինի։ Ես պէտք չեմ զգում յիշեցնել իմ դէմ նստող ազնիւ մարկիզին, որ ես ստիպել եմ Թիւրքաց կառավարութեանը բարենորոգութիւնք մտցնել Փոքր-Ասիոյ մէջ, նաև կարող եմ վստահեցնել ազնիւ լորդին և այս պարլամենտական ժողովին, որ այն առաջին քայլերից մին, որ մեր Թագուհու կառավարութիւնը կանէ, պիտի լինի գրել միւս տէրութեանց միասին գործելով պահանջել Բ. Դռնից Բերլինի դաշնագրի մի քանի պահանջները և մանաւանդ այն յօդուածը կատարելու, որ նրանց իրաւունք է տալիս բէֆորմաների վրա հսկելու։

(կը շարունակվի)

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները, որոնք հաղորդված են Փարիզից։

Վերջին ժամանակներում պատահած անցքերը նորից առաջացրին կօմունարների ընդհանուր ներումն շնորհելու հարցը։

Գամբետտայի համար անհրաժեշտ է, որ պատգամաւորների ժողովի անդամների մինչև հետևեալ ընտրութիւնները կօմունարների ներման հարցը վերջացած լինի։ Հակառակ դէպքում թէ մեծ քաղաքների և թէ ընտրողական միւս շրջանների մէջ նրան կը մեղադրեն, որ նա օգուտ չը քաղեց իր հզօրութենից և չազատեց այն մարդկերանց, որոնք միշտ Գամբետտայի պաշտպաններ են եղել։

Մինիստրների խորհրդի նախագահը նոյնպէս ցանկանում է վերջացնել ընդհանուր ներման հարցը, որովհետև դա իւրաքանչիւր ընտրութիւնների ժամանակ դժուարութիւններին և յուզմունքներին առիթ է տալիս։ Մինիստրների վերջին խորհրդի ժամանակ տաք վիճաբանութիւններ եղան այդ ներման պատեհութեան հարցի առիթով։ Բացի երեք մինիստրներից մնացածները ձայն տուին յօդուտ ընդհանուր ներման և դատապարտվածներին քաղաքական իրաւունքները վերադարձնելուն։

Ազգային լուսաւորութեան մինիստր Ժիւլ Ֆերրի սաստիկ ընդդիմանում էր, որ կառավարութիւնը առաջարկէր պատգամաւորների ժողովին կօմունարների ընդհանուր ներման օրէնքի նախագիծը։ Նրա կարծիքով աւելի լաւ է, որ հանրապետութեան նախագահը օգուտ քաղէր իր իրաւունքից և յուլիսի 14-ին, ազգային տօնի ժամանակ ներէր մի քանի հարիւր դատապարտվածներին, մինչդեռ ընդհանուր ներումն կարելի է շնորհել միայն այն դէպքում, եթէ ֆրանսիական ազգային երկու ժողովները կընդունեն ներման օրէնքի նախագիծը։ Այդ օրէնքի քննութիւնը մի կողմից տաք վիճաբանութիւնների առիթ կը տայ, միւս կողմից հպիւ թէ սենատի մէջ այնպիսի մեծամասնութիւն կազմվի, որ ընդունի այդ օրէնքը։

Մինիստրների խորհրդի վճիռը այդ հարցի վերաբերութեամբ գաղտնի է պահվում։ Շատ հաւանական է, որ յուլիսի 14-ին կառավարութիւնը կօմունարներին ընդհանուր ներումն կը շնորհի և այնուհետև կառաջարկի ազգային մի օրէնք ներված կօմունարներին քաղաքական իրաւունքներ վերադարձնելու մասին։ Այսպիսի ընթացքը աւելի լաւ կը լինի, որովհետև սենատը աւելի շուտ այդ կարգադրութիւնը կը հաւանի, քան թէ մի ուրիշը։ Գամբետտան եռանդով աշխատում է կատարեալ ներումն շնորհելու մասին։

Պատգամաւորների ժողովը վերջացրեց տարիֆի հարցի քննութիւնը։ Այժմ սենատը պէտք է քննի այդ հարցը և երբ կառավարութիւնը վերջնական վճիռ կը տայ, այն ժամանակ կարելի կը լինի վերանորոգել առևտրական դաշնագրութիւնները։ Սենատի նախագահ Լէօն Սէ, քանի որ դեսպան էր Լօնդօնում, այդ գործի մէջ մեծ աջողութիւն ունեցաւ։ Նա անգլիական կառավարութեան հետ սկզբնական մի դաշնագիր կապեց, որով Անգլիա տարվող ֆրանսիական գինիների տարիֆի վճարը բաւական պակասեցրած է։ Լէօն Սէի այդ աջողութիւնը նրան մեծ նշանակութիւն կը տայ, երբ սենատը կը սկսի քննել տարիֆի հարցը։ Ֆրանսիայի գինեգործների համար մեծ նշանակութիւն ունի, որ անգլիական կառավարութիւնը համաձայնեց ֆրանսիական գինիների տարիֆի վճարը վերցնել գինու մէջ եղած սպիրտի քանակութեան համեմատ։ Յայտնի է, որ ֆրանսիական գինիները իրանց մէջ շատ քիչ սպիրտ են պարունակում, իսկ սպանիականների մէջ սպիրտի քանակութիւնը մեծ է։ Այդպիսով ֆրանսիական գինիների Անգլիա տանելը կը հեշտանայ, իսկ սպանիական գինիներինը կը դժուարանայ։ Անգլիայի կողմից արած այդ զիջումի փոխարէն Ֆրանսիան պարտաւորվում է անգլիական գործարանական արդիւնաբերութեան տարիֆի վճարը փոքրացնել։

Յունիսի 29-ին պէտք է կատարվեն ֆրանսիական կառավարութեան մարտ ամսին տուած հրամանները եզուիտների վերաբերութեամբ։ Այդ օրը ժամանում է և կառավարութեանը անհանգստացնում է։ Յայտնի է, որ արգելված միաբանութիւնները վճռել են եզուիտների վիճակը բաժանել։ Նրանցից ոչ մէկը իր իրաւունքից օգուտ չը քաղեց և կառավարութեանը կանոնադրութիւն չը ներկայացնելով, իր գոյութեան համար թոյլտուութիւն չը խնդրեց։

Այդ յամառութիւնը, որով հոգևոր միաբանութիւնները իրանց վիճակը կապում են եզուիտների վիճակի հետ, բաւական դժուարացնում է, բայց չէ կարողանում արգելել կառավարութեան հրամանների իրագործելուն։ Ոչ մի բան չէ ստիպում կառավարութեանը կատարել հրամանները բոլոր միաբանութիւնների վերաբերութեամբ։ Նա կարող է եզուիտներից սկսել, իսկ միւս միաբանութիւնների հիմնարկութիւնների փակելը վեց ամսից կամ մի տարուց յետոյ սկսել։ Նայելով թէ ինչպէս կը վերջանայ եզուիտներին արտաքսելու գործը, կառավարութիւնը կարող է վճռել, թէ ինչպէս պէտք է վարվի միւս միաբանութիւնների հետ։ Շատ կարելի է, որ այս վերջինները կը նկատեն կառավարութեան ոյժը և եռանդը եզուիտներին արտաքսելու գործի մէջ և այնուհետև կը ներկայացնեն իրանց կանոնադրութիւնները և գոյութեան համար թոյլտուութիւն կը խնդրեն։ Առժամանակ կառավարութիւնը կարդադրում է, որ մինչև յունիսի 29 եզուիտական հիմնարկութիւնները փակված լինեն և եզուիտները թողնեն իրանց բնակարանները։ Օրերումս Փարիզ հրաւիրվեցան 36 պրեֆեկտներ այն բոլոր նահանգներից, որտեղ եզուիտները զանազան հիմնարկութիւններ ունեն։ Փարիզում նրանք ամենամանրամասն հրահանգներ ստացան, թէ նրանք ինչպէս պէտք է վարվեն, եթէ եզուիտները հրաժարվեն կամաւորապէս ենթարկվել նրանց հրամաններին։ Անկասկած պրեֆեկտներին հրաման է տուած, որ այդ դէպքում զինուորական ոյժ գործադրեն։ Պրեֆեկտները թոյլ կը տան, որ եզուիտները իրանց միաբանութենից ընտրեն մի կամ երկու անդամ նրանց կայքը պահպանելու համար։ Միայն այդ ընտրվածները իրաւունք կունենան մնալ իրանց բնակարանների մէջ։

Յունիսի 29-ին պէտք է փակվեն եզուիտների այն հիմնարկութիւնները, որոնց մէջ ուսումնարաններ չը կան։ Վերջիններին իրաւունք է տուած գոյութիւն ունենալ մինչև ուսումնական տարվայ վերջը։

ԱԼԲԱՆՑԻՆԵՐԻ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը:

Վիէննայի մեր սեփական թղթակցից ստացված հեռագիրը առանձին ուշադրութեան արժանի է:

Հարաւային Ալբանիայի ներկայացուցիչների ժողովը, ազգասիրական զգացմունքով ոգևորված, դիմում է Եւրոպային մի գրութեամբ, որով բողոքում է Յունաստանի պահանջների և Հարաւային Ալբանիայի բաժանման դէմ և որով սպառնում է հետևել հիւսիսային ալբանցիների օրինակին և զէնքով ընդդիմանալ Յունաստանի տիրապետութեանը:

Մենք երբէք չենք կասկածել, որ Զերնոգորիային ընդդիմադրող ալբանական միութիւնը Կ. Պոլսի մէջ էր ստեղծված և այնտեղից էր ստանում հրամաններ և խրատներ: Ներկայումս, երբ Կ. Պոլսի քաղաքագէտները համոզվեցան, որ Եւրոպան ձանձրացաւ սպասելով Յունաստանի և Թիւրքիայի համաձայնութեանը և ինքը մտադիր է գործնական ընթացք բռնել, Կ. Պոլսի մէջ հարկաւոր համարեցին առաջ բերել հարաւային ալբանցիների ներկայացուցիչների ժողովը: Եթէ լաւ քննենք Բալկանեան թերակղզու գործերի դրութիւնը, կը տեսնենք, որ հարաւային ալբանցիների դրութիւնը Կ. Պոլսի մէջ է ստեղծված:

Օտար տիրապետութենից հայրենիքը ազատելու ցանկութեան վրա հիմնված իւրաքանչիւր ազգային շարժումն, անկասկած համակրութեան արժանի է իւրաքանչիւր պատուաւոր մարդու կողմից: Բայց պէտք է ի նկատի առնել, որ այդ շարժումը մի անկախ, կամ իր անկախութիւնը դիպուածով կորցնող մի ազգութիւն է անում: Ալբանիան չունի այդ յատկութիւնները: Դարերի ընթացքում թիւրքաց երկրի մասը կազմող, ոչինչ ազգային առանձին իրաւունքներ չունեցող, ազգային անկախութիւն ստանալու համար ոչինչ չը կատարած Ալբանիան իր անհիմն պահանջներով ներկայանում է Եւրոպային այնպիսի րոպէում, երբ եւրոպական պետութիւնների վճռի հիման վրա, թիւրքաց կառավարութենից ազատվելով և յունաց կառավարութեան իշխանութեան տակ մտնելով, նրա վիճակը պէտք է բարւոքվի: Անկասկած Յունաստանի և Զերնոգորիայի տիրապետութիւնը Ալբանիայի համար աւելի ծանր չէ կարող լինել, քան թէ թիւրքաց տիրապետութիւնը, նրանց անկարգ վարչութիւնները և անարդար դատարանները: Ալբանիայի հրապակութեան փոխելը աւելի հեռաբրքիր պէտք է լինի Թիւրքիայի համար, քան թէ Ալբանիայի համար: Եթէ ալբանցիները մինչև այժմ Թիւրքիայից բաժանվելու և անկախութիւն ձեռք բերելու ցանկութիւն չեն յայտնել, ուրեմն ի՞նչի են այդ ցանկութիւնը այժմ յայտնում, երբ Ալբանիայի մի մասը Զերնոգորիայի, իսկ միւս մասը Յունաստանի իշխանութեան տակ պիտի անցնի: Պէտք է ի նկատի առնել և այն հանգամանքը, որ թէ հիւսիսային ալբանցիների միութիւնը և թէ հարաւային Ալբանիայի ներկայացուցիչները չեն պահանջում բաժանվել Թիւրքիայից և անկախ ալբանական մի իշխանութիւն կազմել. այլ բողոքում են Բերլինի դաշնագրի վճիռների դէմ: Պարզ երևում է, որ ալբանական շարժման կառավարիչներին սուլթան Աբդուլ-Համիդի խորհրդատուներն են առաջնորդում: Նորերումս մենք արտատպեցինք անգլիական լրագիրների ստացած հեռագիրները, որոնք հաղորդում էին, թէ թիւրքաց կառավարութիւնը Բերլինի կոնգրեսի վճիռները իր համար պարտաւորեցուցիչ չէ համարում: Թէպէտ նոյն լրագիրները այն հեռագիրները աւելի խաղաղասիրական ոգով մեկնեցին, բայց Բերլինի մեր սեփական թղթակցից ստացված հեռագիրները նրանց հաստատում են: Գերմանիայում եղած թիւրք հաւատարմատարները բացարձակ յայտնում են, որ Բ. Դուռը կոնգրեսից խորհուրդի է սպասում, որին կը հետևի, որքան կարելի է, բայց նրա վճիռները պարտաւորեցուցիչ չէ համարում:

«Polt. Corresp.» լրագրի համարներից մէկի մէջ տպված էր թիւրքաց արտաքին գործերի նոր մինիստր Արեգդին-փաշայի կենսագրութիւնը: Այդ կենսագրութեան հեղինակ թղթակիցը Արեգդին-փաշային ալբանական ապստամբութեան հայր է անուանում: Հաւանական է, որ նոր մինիստրը խորհուրդ կը տայ սուլթանին օգուտ քաղել ալբանցիների ծառայութենից և այդպիսով ընդդիմադրել կոնգրեսի վճիռներին: Մենք չենք զարմանայ, եթէ կիմանանք մի ժամանակ, որ հարաւային Ալբանիայի շարժման պատճառն էլ նոյն Արեգդին-փաշա է եղել: Եւրոպան պարտաւոր է ուշադրութիւն դարձնել այն անցքերի վրա, որոնք այժմ կատարվում են Կ. Պոլսի մէջ:

Յունական կառավարութիւնը զորքի վրա նոյն իսկ այդ տեսակէտից է նայում և հրամայել է 38,000 մարդուց բաղկացած զօրքեր պատրաստել:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, 18/30 մայիսի

Ես ուրախ եմ որ այսօր կարող եմ նամակս սկսել փառք տալով Աստուծոյ որ իր զթութիւնը սկսած է ցոյց տալ Վասպուրականի ժողովրդին: Մի քանի օր յառաջ այնպէս առատ անձրև եկաւ և այնպիսի յարմար ժամանակի մէջ որ ցորենի հրապարակագիրին վրա մեծ ազդեցութիւն ունեցաւ: Ցորենի չափն (1 չափ 3 պուդ է) որ մինչև 3 օսմանեան ոսկիի (27 րուբլ) կը ծախուէր մը քանի օր յառաջ, այսօր 1 օսմ. ոսկի (9 րուբլ) կը ծախուի: Հացին հոխան (3 գրվանքայ) յառաջ կը ծախուէր մինչև 12 ղրուշ (60 կոպէկ), այսօր կը ծախուի 4 ղրուշ (4 չահի): Թէ ժողովուրդն կարենայ տոկալ մինչև հունձի ժամանակ (յուլիս ամիս), այս տարի շատ առատ տարի պիտի ունենանք, թէև գարնցան *) գրեթէ բնաւ չեղաւ, այլ ինչ որ աշունին չէր կերուած և ցանուած էր, այն է միայն հնձուելիք: Ոչ միայն արմտիքը, այլ և ամեն տեսակ բանջարեղէններ և խոտեր շատ առատ են այս տարի: Ծերունիներ կը պատմեն թէ քիչ անգամ տեսած են այսպիսի առատ տարի: Ուրեմն, թէ յունիսի կամ յուլիսի մէջ կարկուտն չը վնասէ արմտիքներուն և կամ թիւրք կառավարութիւնը այնպիսի բռնաւորական միջոցներով չը ճնշէ գիւղացիները որ ստիպուին իրենց աշխատութիւնները երեսի վրա թողուլ և ցրուիլ, Վասպուրականի ժողովուրդը երկու ամիսի չափ յետոյ կը պրծի սովի ահռելի ճիրաններէն: Կ. Պոլսի մասնաժողովը մինչև այժմ մօտաւորապէս 80,000 րուբլի յղած է Վանի մասնաժողովին միայն, որպէս զի Վասպուրականի սովածներուն բաժնուի: Այս հաշիւէն դուրս են Էրզրումի մասնաժողովին ղրկուածներն որ Բասենի, Բայազէթի, Ալաշկերտի և այլ սովածներն կը հոգայ: Շնորհակալ ենք շատ մեր ռուսաստանցի ազգակիցներէն որ իրենց առատ նուէրներով օգնեցին մեզ մեր մահուան ճգնաժամին մէջ և ինչպէս կը լսենք, միայն «Մշակի» միջոցով 22,000 րուբլի ղրկուած է Կ. Պոլսի մասնաժողովին: Կը յուսանք որ երկու ամիսի չափ ալ անմխիթար չեն թողուր զմեզ որով Հայաստանի ժողովուրդը մահէն ազատած և նոր կեանքի մէջ ծնած պիտի լինին: Գիւղացի ժողովուրդը բոլորովին աղքատացած է այժմ. ինք անօթի, իր ոչխարները և հողագործական կենդանիներն ալ, եզները կոտորուած են. թիւրք կառավարութիւնն ալ այս սովամահ ժողովրդին վրա բռնացած, ամեն տեսակ տուրքեր կը պահանջէ, թէև մեր Ս. Պատրիարքը թաքրիր գրած է Բ. Դուռը որ տուրքերուն թոյլտուութիւն լինի այժմ և եպարքոսն ալ այդ իմաստով հրամանագիրներ յղած է նահանգապետներուն, բայց այդպիսի հրամանագիրները գրուած լինելու համար միայն կը գրուին և ոչ թէ գործադրուելու համար....Շատ հաւանական է որ այդ հրամանագիրներու հետ ծածուկ ուրիշ հրահանգներ ալ կը տրուին նահանգապետներուն և նոքա ալ կը հաղորդեն կայմակամներուն զի կը տեսնենք որ այդպիսի հրամանագիրներէ յետոյ տեղական կառավարութիւնները աւելի խստութեամբ և չտապելով կը հաւաքեն տուրքերը քան թէ յառաջ և Բ. Դուռն ալ բնաւ ձայն չը հաներ: Իրաւ է թէ այժմ ձիւները վերցած և ճանապարհները բացուած լինելով, զանազան տեղերէ սկսած են ցորեն բերել և ձէզիրէի, Սղերտի կողմերէն, ուր հունձն վերջացած և շատ առատ եղած է այս տարի, սկսած են ցորեն բերել, բայց ճանապարհներն անապահով են և աւազակութիւններ, մարդասպանութիւններ սկսած են շատնալ, կառավարութիւնն ալ բնաւ հոգ չը տաներ այդ բանի, առաջն առնելու: Եթէ այսպէս շարունակվի, գիւղացին չը պիտի կրնայ դաշտերն երթալ աշխատել, որով այս տարուան առատութիւնը օգուտ չը պիտի ունենայ և առաջիկային մէջ գուցէ աւելի սարսափելի սով տիրէ այստեղ: Այս տողեր ընթերցողները թերևս պիտի ասեն որ թող հայեր զէնքով երթան դաշտերն աշխատել. բայց մի կողմ թողունք որ անօթի մնացած գիւղացին ինչպէս պիտի կրնայ զէնք գնել և այս բանի համար իրեն օգնող, խորհող անդամ չը կայ բնաւ, երբ մի հայ զէնքով զինք պաշտպանէ աւազակ և մարդասպան քուրդին դէմ, թուրք կառավարութիւն անմիջապէս չղթայակապ կը բանտարկէ զայն և տարիներով կերկարաձգէ գործը, մինչև որ նորա ընտանիքը յետին թշուառութեան մէջ ինկած կործանի, այդ տունը (օջախ): Նախորդ նամակովս ձեզ իմացուցած էի թէ Լիմ գիւղացի մի հայ երիտասարդ, Թովմաս Յովհաննէսեան անուն, սպանած էր Ալի աղա անուն մի քուրդ որ իր վրա յարձակելով զինք վիրաւորեր և սպաննել աշխատած էր: Լիմցի քուրդեր այժմ խեղճ Թովմասի տուն քանդելէ յետոյ, այս օրեր ալ նորա ընտանիքէն մի անձ սպաններ են. թիւրք կառավարութիւնը բոլորովին ազատ թողած է այդ քուրդեր որ ուզածնին անեն. իրենցմէ ոչ մին չէ բանտարկած, չէ պատժած, բայց Թովմասի հարցաքննութեան պատրուակով հետզհետէ շատ հայ գիւղացիներ ալ կը բանտարկէ, որոնք ով գիտէ թէ քանի ամիսներով, քանի տարիներով պիտի փտին բանտերու մէջ և պիտի մեռնին: Ահա գործերը այս վիճակի մէջ են այստեղ և ինչ կարող է անել աղքատ, սոված, անզէն և միանգամայն տգէտ հայ գիւղացին: Զարմանալի չէ երբ այսպէս կառավարուած երկրի մը մէջ սարսափելի սով պատահի նոյն իսկ երաշտութիւն չեղած տարիներն: Սովածները խնամող կեդրոնական մասնաժողովը յատուկ պատուիրակներ պիտի յղէ Կ. Պոլիսէն այստեղ որպէս զի սովի բուն պատճառները մանրամաս կերպով իմանան, տեղական մասնաժողովներու գործողութեանց, հսկեն և աջակցեն և, որչափ կարելի է, ժողովուրդը պաշտպանեն սովի պատահականութեանց դէմ: Վանի մասնաժողովն ալ մասնաճիւղեր կազմած է Աղբակ (Պաշկալա), Շատախ, Մոկս և այլ գաւառներ և յատկապէս մարդեր հանած է զանազան տեղեր: Վանի մասնաժողովն սոված աղորիներին ալ օգնութիւն կանէ, որոնք խումբ խումբ կը գիմեն մեր ազգային առաջնորդարանը: Թէ կառավարութիւնն ալ բաւական օգնէ հայ ազգի արած ջանքերուն, տարակոյս չը կայ որ առաջիկայ հունձէն յետոյ ցորենի չափը դարձեալ 20—30 ղրուշի (1—1½ րուբլի) պիտի կրնայ ծախուիլ, որպէս կը ծախուէր սովէն յառաջ: Բայց ինչ յոյս կարելի է դնել այն թիւրք կառավարութեան վրա որ նոյն իսկ թիւրքեր և քուրդեր անխնամ թողած է, որոնք սոված կը մեռնին և իրենց դիակներուն շատ տեղեր կը պատահի մարդ գիւղային ճանապարհներու վրա և մինչև անգամ Վան քաղաքին մէջ, Վալի փաշայի, Սամիհ փաշայի և բարեկարգութեանց տեսուչ (կոմիսէր) փաշայներու աչքին առջև: Ատուած տուաւ որ զանազան տեղերէ հայեր օգնութեան կը հասնին մեզ, եթէ ոչ հայ ազգաբնակութեան կէսը չէր մնար այստեղ:

Զը գիտենք դեռ թէ անգլիական նորընտիր ազատամիտ պաշտօնէութիւնը ինչ պիտի անէ մեր այս թշուառ Հայաստանի. դեռ ոչ մի բարեկարգութեան նշոյլ տեսած չենք: Կը լսենք թէ Հայաստանի և Քուրդստանի ընդհանուր հիւպատոս պ. Տրոտտը հազարապետը Լօնդոն կանչուած է և Վանի փոխ-հիւպատոս պ. Կլէյտոն հարիւրապետը պիտի երթայ զինք տեսնել Սղերդ: Անցած շաբաթ պիտի մեկնէր պ. Կլէյտոն, բայց կերևի թէ նոր հրահանգի սպասելով մնաց մինչև այսօր:

Խրիմեան հայրիկ սկսած է վարել իր առաջնորդական պաշտօն և Երեմեա եպիսկոպոս որ քաշուած է առաջնորդարանէն դէպի վարագի վանքը, այժմ կոտոշ անապատի վանահայր ընտրուեր է: Տնտեսական, դատաստանական և ուսումնական խորհուրդներն ալ ընտրուեցան ազգային վարչութենէն. այս օրեր պիտի ընտրուի նաև վանօրէից խորհուրդը:

Հայրենասէր Սանուց ընկերութիւնը կը պատրաստուի առաջիկայ կիրակի օր (մայիս 25) մեծ հանդէսով տօնել ազգային սահմանադրութեան քսաներորդ տարեդարձը, Ս. Գրիգոր սքանչելագործի վանքին առջև ընդարձակ, ծառաւէտ և ղուարճալի դաշտին մէջ, ընդ նախագահութեամբ Խրիմեան հայրիկի: Կը յուսացուի որ շատ մեծ բազմութիւն հաւաքուի այդ դաշտին մէջ: Ճաշկերոյթէն լինելիք հասոյթին կէսը սովելոց պիտի տրուի, կէսն ալ Հայրենասէր ընկերութեան տեսչութեան տակ գտնուած Հայկազեան վարժարանին: Ճաշկերոյթի տոմսակները այսօրէն սկսած են վաճառուել մէկ արծաթ մէճիտի (1 րուբլի և կէս):

ՀՐԱՆՏ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, 12 մայիսի

Պարսկաստանի ամբողջ քաղաքները, որոնք մերձակայ էին Ռուսաստանի սահմաններին, սարսափելի նեղութիւններ են կրում սովից: Դավրէժում օրական 30—40 հոգի փողոցներում սովամահ են լինում: Շատ գիւղերում, քաղցածութիւնից մարդիկները բանջարեղէնների արմատներ և սովից կոտորված անասունների միս են ուտում: Միակ Ռաշտ իր գաւառներով ենթարկված չէ սովի հետևանքներին:

Ռաշտի ամենագլխաւոր երկրագործութեան բերքերն են մետաքս և բրինձ: Թէ քաղաքացիների և թէ գիւղացիների մշանջենաւոր կերակուրը եփած բրինձն է, որ ուտում են հացի փոխարէն: Որպէս ցորենի վար ու ցանքը կլիմայի անյարմարութեան պատճառաւ սովորական չէ, նոյնպէս և բնակիչների մշտական բրինձ ուտելը անհրաժեշտ է: Գիւղերում տարիներով մարդիկ հացի համ չեն տեսնում:

Բրինձի բերքը անցեալ տարի Ռաշտի Նահանգում այնքան առատ էր, որ ամենեին տեսնված չէր: Կալից յետոյ տեղս բրինձը գնում էին պուդը 80 կոպէկ: Մաքսապետները պատմում են, թէ տեղիս սահմանիցը, մօտաւորապէս 200,000 քսակ բրինձ են դուրս տարած դէպի Ռուսաստան: Այսպիսի մեծ քանակութեան բրինձի դուրս տանելը թանգութեան առիթ դարձաւ, և բրինձի արժէքը բարձրացաւ մինչև 2 րուբլ 20 կոպէկ:

Ցեղիս մօլլաները, սէյիտները և դարվիշները նկատելով բրինձի այսպիսի թանգութիւնը, որ երբէք տեսած չէին, յորդորեցին անբողջ հասարակութեանը և սկսեցին միաձայն բողոքներ բարձրացնել տէրութեան առաջ, որ արգելէ սահմանից դէպի Ռուսաստան բրինձ դուրս թողնելը: Եւ տէրութիւնից իսկոյն հրաման ստացվեցաւ սահմանից բրինձ դուրս չը թողնելու համար:

15 տարի սրանից առաջ, երբ ես Ռաշտ էի, Ռաշտ ունէր ընդամենը երկու տուն հայ բնակիչ և 25—30 օտարական հայ վաճառականներ: Սոքա եկեղեցի չունէին. միայն քարվանսարայի կըրպակներից մէկումը քահանան եկեղեցական խորհուրդներ էր կատարում, իսկ պատարագ, որ միայն Զատկի և Զրօրհնեաց տօներին կը լինէր, ռուսաց հիւպատոսարանի մեծ դահլիճում կը մատուցանէր: Այժմս, գոհութիւն Աստուծոյ, Ռաշտ ունի ամենագեղեցիկ եկեղեցի և 50 տուն հայ բուն բնակիչներ:

Եկեղեցու կառուցման համար բազում բարոյական և նիւթական աշխատանքներ է գործ դրած ազգասէր մեծապատիւ Թաջիր-բաշին (գլուխ վաճառականաց) պ. Ռուստամ բէկ Մելիք-Ալլահվերդեանցը: Եկեղեցու շինութիւնը աւարտված է անցեալ 1879 թուին: Եկեղեցու գաւթում շինած են մէկ սրահ ուսումնարանի համար: Երեխաների ուսուցիչը ժամի տիրացուն է, որը ամսական եկեղեցու արդիւնքից 10 րուբլի վարձ է ստանում: Վարժապետի բոլոր ուսման առարկաները—սաղմոս, ժամագիրք և շարական է:

Օրերումս լսեցինք թէ մէկ 15 տարեկան տղայ փախած է գիւղը, որ Թուրքանայ: Ինչպէս պատմում են, նա սիրահարված է եղել մէկ կալուածատէր Թուրքի աղջկայ վրա: Աղջկայ հայրը խոստացած է տալ նրան իր աղջիկը և փող, եթէ նա կը Թուրքանայ: Տարակոյս չը կայ, որ տեղիս եռանդոտ հայերը չուտով կը գտնեն, և թոյլ չեն տայ, որ նա հաւատը ուրանայ:

Յովհաննէս Բարութչեանց

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

*) Այստեղ սովորութիւն կայ ոչ միայն աշունին, այլ և գարունին ցորեն սերմանել. թէև աշունին աւելի կը ցանեն ընդհանրապէս որ աշնցան կը կոչուի և աւելի լաւ կը լինի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օլէօզրաֆիական պատկերներ 20% զեղչումով. վերարկուներ 6—0 ր., խոզանակներ պատմեֆտուիրված են լրի մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենալաւ ածելիներ, տրկղիկով 4 ր., շեֆիլդի դանակներ 3-20 ր. դիւժինը, բրիտանական մետալի թէյամաններ 30 կ.—3 ր., ցիտրատ-մագնեզիա, թիւրքական շերբէթ և ծարաւը բագեցնող նիւթ 70 կ., ամենալաւ պօրտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

14—0

ՓՈՐՁԱՌՈՒ ՀԱՇԻԱՊԱՀ

Որ նորերումս է եկել, ցանկանում է տեղ ունենալ: Համաձայն է նոյնպէս անցած տարիներից մնացած տարեկան ՀԱՇԻՒՆԵՐԸ կազմել և թողած ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ և ԲԱԼԱՆՍՆԵՐԸ կարգի բերել: Հասցէն թողնել Փարիզ հիւրանոցում № 4:

4—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

15—100

ՄԷԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտէ հայերէն, ռուերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿԱՆՏՈՐՉԻԿԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:

Յունիսի 10-ից ամառնային պարապմունքների համար ընդունում են աշակերտներ: Հասցէն հետևեալն է.

Элементарная школа, Вельяминовская улица, д. Аматуни.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ երեխաների 4 ր., տղամարդկերանց 9—20 ր., ամբողջ հագուստը, պիջակ 5 ր., ՈՐՏԵՂ Է ԾԱԽՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամազէյ, պարուսին, տրիկո, դրապ, փոստի թուղթ, թաւիշ կապերի և կառքերի համար, կալենկոր և այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համեղ մուրաբաներ, կոնֆետներ հազվադէմ, պանիր, մագնեզիա, ամաններ, կարբոլեան փոշի, սապօն, պարսկական փոշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄԵՆԱԷԺԱՆ գներով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

15—20

ՇՕԿՕԼԱԴ ԵՒ ԿԱԿԱՕ ֆրէյ և որդիկ, որոնք Փարիզի աշխարհանդէսի ժամանակ ոսկէ ՆՇԱՆ ստացան, վերջապէս ստացվեցան **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**: Նոյն տեղ դարձեալ ստացվեցաւ թէյ մեծ քանակութեամբ: Նատ պատուական թէյ ֆունտը 1 ր. 20 կ., և 1 ր. 40 կ.

8—10

Նուազով մամուլի տակից լոյս կը տեսնեն Պետերբուրգի Ֆրեօբելեան ընկերութեան հետևեալ հրատարակութիւնների հայերէն թարգմանութիւնները:

Ի. Լակիդէի «ՏԻՐՈՐԴ ՈՍԿԻ» II. Ավենարիուսի «ԻՆՉ Է ԽՕՍՈՒՄ ՍԵՆԵԱԿԸ» III. Սմիրնովի «ՀՈՐԹԱՐԱՆ:» Դորանցից մէկը արդէն մամուլի տակ է:

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

ՐԷԱԼԱԿԱՆ դպրոցի 6-դ դասատան ԱՇԱԿԵՐՏ ցանկանում է մասնաւոր ԴԱՍԵՐ ունենալ և ՊԱՏՐԱՍՏԵԼ երեխաներին այդ դպրոցի ԶԱՆԱԶԱՆ ԴԱՍԱՏՈՒՆՆԵՐԻ համար: Հասցէն «Մշակի» խմբագրատանը:

2—2 (2)

Թիֆլիսի ընկերութեան Հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մամուլի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ՐԻՉԷՐ-ՍՏՕՈՒ. ԹՈՎՄԱՍ ԵՂԲՕՐ ՏՆԱԿԸ, փոխ. երեխաների համար Պալմեր, Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵԽ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆԶԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով Въ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-Ի 3 ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Ռէյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդվօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի կիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւաւոտեան Օբրեխատ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

ԻԼԻԻ ՀԵՆՐԻԽ ՅԻՄԵՐՄԱՆԻ,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ԲՈԼՇԱՅԱ ՄՕՐՍԿԱՅԱ, № 42

Առաջարկվում են արտասահմանի ամենալաւ գործարաններից նորերումս ստացված երաժշտական գործիքներ:

ՋՈՒԹԱԿՆԵՐ 2½ ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 150 ր., ԿՆՏՆՏՈՑՆԵՐ (смычекъ) 50 կ., 1½ ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանգ մինչև 25 ր., ԱՐԿՂՆԵՐ 2½ ր., 5½ ր., 6 ր., 7 ր., 10 ր. և աւելի թանգ մինչև 20 ր. Հին իտալական և գերմանական ջութակներ մինչև 600 ր. ՋՈՒԱԿՆԵՐ փոքր դիրքի երեխաների համար 2 ր. 50 կ. մինչև 30 ր. Ջութակի չկոլա (ինքնուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր. ԱԼՏԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանգ. ՎԻՕԼՕՆՉԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանգ մինչև 600 ր. Վիոլօնչելի չկոլա 4 ր. ԿՕՆՏՐԲԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանգ. ԳԻՏԱՐ 3 ր. 50 կ., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր. Գիտարի չկոլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 2 ր., 3 ր. ՅԻՏՐԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր. Ցիտրայի չկոլա 2 ր., 3 ր. 50 կ., նոտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իրաքանչիւր տետրակը. ՄԱՆԴՈԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ. չկոլա 3 ր. Ամենալաւ իտալական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՈՆ 40 կ., 50 կ., 1 ր., 50 կ., 2. ր., 6 ր. Սուրզին կանիֆոլ և այլ պատկանելիք. ՄԵՏՐՈՆՕՄ 8 ր., 12 ր. Երկաթի ծալվող ՊԻՒՊԵՏՐՆԵՐ 5 ր. Երկաթի ծալվող պիւպետրներ մոմակալներով 6 ր., 8 ր. Գերմանական ԳԱՐՄՕՆՆԵՐ 4 ր., 4 ր. 50 կ., 5 ր. 50 կ., 7 ր. 50 կ., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ. Գարմոնիայի չկոլա և նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1 ր. 50 կ., իրաքանչիւր տետրակը. ԿՕՐՆՊԻԱ-ՊԻՍՏԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 100 ր. Շկոլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 4 ր., 5 ր. ԱԼՏՓՕՐՆ, ՆՇԱՆԱՓՈՂԵՐ, ՏՐՈՄԲՈՆՆԵՐ, ՖԼԵՑՏԱՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ. Շկոլա (ինքնուսուցիչ) 1½ ր., և 3 ր., նոտաներ 40 կ., 1½ ր., 3 ր. իրաքանչիւր տետրակը. ԿԼԱՐՆԵՏՆԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր. Կլարնետի չկոլա 4 ր., Բեկլօ, Զականի, Ֆլաժօլետներ. Անգլիական ԿՕՆՑԵՐՏԻՆՕ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր., և թանգ մինչև 160 ր. Շկոլա 3 ր., նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1½ ր., Գերմանական կոնցերտինօ 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր. Շկոլա (ինքնուսուցիչ) 75 կ., նոտաներ 40 կ., և 1 ր. իրաքանչիւր տետրակը երաժշտական արկղներ 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր. ՖԻՍԴԱՐՄՕՆՆԵՐ 90 ր., 100 ր. 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանգ. ԳԱՐՄՕՆ ԵՐ ՖԼԵՑՏԻ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր., 90 ր. ԳԱՐՄՕՆՆԵՐ ֆիւտի ՕՐԳԱՆՈՎ 175. և 225 ր. ՇԱՐՄԱՆԿԱ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր. Իտալական չարմանկաներ 150 ր., 200 ր., 250 ր. ՕՐԳԱՆՆԵՐ թաչունների համար 10 ր., 15 ր. Թմբուկներ, լիտավրներ, բունչուկներ, բանդոնիոն, մետալական շրթունքների բելկաներ, եռանկիւնիներ, գարմոններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշդութեամբ: Ճանապարհածախսը գնողինն է. Ծախվում են հատով և մեծ քանակութեամբ:

1—1



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրոգիստների մօտ: Գլխաւոր դէպոն նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտորալնի փողոց. № 35. Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. Պէտք է ընդունել խարդախումներից.

11—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ(1)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է այս ամառվայ արձակուրդներին ընտանիքի հետ ամառանոց գնալ ուսուցչի պաշտօնով: Կարող է պատրաստել երեխաներին բոլոր ծխական և միջնակարգ ուսումնարանների առաջին, երկրորդ և երրորդ դասատանց համար, (բացի դասական լեզուներից) կամ պարապել մանուկների հետ, և ուսուցանել հայոց և ռուսաց լեզուներ՝ թէ աշակերտներին և թէ չափահասներին: Նմանապէս կարող է ցանկացողներին ուսուցանել և վրաց լեզուն:

Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը. ցանկացողներին խնդրում եմ վաղօրօք յայտնել իւրեանց պահանջը:

4—5

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, բեվօլվերներ, դանակներ, զրիչներ, անուշահոտութիւններ, սապօն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

6—20

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Զաք. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում» Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով. Աշխատասիրութիւն Ն. Սիմէոնեանց: Գինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զիջումն կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մատեմատիկական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոցա գները: Օտար քաղաքացիք դիմում են:

Въ Тифлисъ. Кавказская книжная торговля З. П. Грикурова.

7—20

Вишелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ **„Сборника свѣдѣній о Кавказѣ“**, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«Тифлисъ по однодневной переписи 25-го марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложеніями, а именно:

1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;

2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);

3) копія съ плана Тифлиса по царевичу Вахушту (1739 г.);

4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна **4 руб. сер.**; на пересылку прилагается за 5 фунт.

Дозволено Цензурою 18 Іюня 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона